Իսպանիան կրակի մեջ 2

Պատահարներ ջրում 5



Ջրհեղեղներ 6

Կանաչ թեյի գաղտնիքները 7

ISSN 1829-149X

9 771829 149003 09027

ով իրազեկված է, նա պաշտպանված է

արտակարգ թերթ

N 27 (300) 24.7.2009 - 31.7.2009 www.emergency.am

Կանզասցիները Հայաստանում

Հուլիսի 21-ից 23-ը ՀՀ ԱԻ ՀՓԾ ճգնաժամային կառավարման ակադեմիայի շենքում «Կենսաբանական անվտանգություն» թեմայով սեմինար պարապմունք էր: Իրենց փորձն էին փոխանակում հայ եւ ամերիկացի, մասնավորապես՝ կանզասցի մասնագետները: Սկզբում Կանզասի համալսարանի փորձագետները ներկայացրեցին գյուղատնտեսական ծագում ունեցող հիվանդությունների դեմ իրենց նահանգի արձագանքման ծրագիրը, այնուհետեւ Գյուղատնտեսության, Առողջապահության եւ Արտակարգ իրավիճակների նախարարությունների հայ մասնագետները ներկայացրին իրենց փորձը:

Կանզաս-Հայաստան պետական համագործակցության ծրագրի հիմքերը դրվել են դեռ 2003 թվականին: Հիմնական նպատակն էր խթանել փոխադարձ հետաքրքրությունները եւ ստեղծել երկարաժամկետ հարաբերություններ՝ հասարակական բոլոր մակարդակներում:

Ծրագրի առանցքում դրված խնդիրներն են՝ աջակցություն ահաբեկչության դեմ պայքարին, համագործակցություն տարածաշրջանային անվտանգության պահպանման համար, ռազմական բարեփոխումների իրականացում, ռազմաքաղաքացիական գործողություններ, աջակցություն քաղաքացիական իրադարձություններին, տարածաշրջանային համագործակցություն:

Կանզասցիների առաջին պաշտոնական այցելությունը Հայաստան եղել է 2004 թվականին:

Այս անգամ կազմակերպված սեմինարի վարողներից մեկն էլ Կանզասի պետական համալսարանի Ազգային գյուղատնտեսական-կենսաբանական անվտանգության կենտրոնի ղեկավար Մարթի Վանիերն էր. «Մեր նպատակն է ոչ միայն ուսուցանել հայ մասնագետներին, մենք էլ մեր հերթին ուզում ենք սովորել նրանցից: Մեզ շատ հետաքրքիր է, թե Հայաստանում ինչ են անում լուրջ հետեւանքներ ունեցող գյուղատնտեսական-կենսաբանական հիվանդությունների դեմ պայքարելու համար»:

Կանզասի համալսարանական պրոֆեսորները սեմինար

անցկացնելու համար եկել էին Կանզասի Ազգային գվարդիայից ժամանած պատվիրակության հետ՝ հրամանատար, գեներալ-մայոր Թոդ Բանթինգի գլխավորությամբ: Սեմինարին ներկա էր նաեւ գվարդիայի հրամանատարի հատուկ հանձնակատար Դեյվ Յանգը, ով արդեն 4-րդ անգամ է Երեւանում. «Հայաստանի հետ համագործակցությունը մենք նախ սկսեցինք ռազմական ոլորտում: Այս անգամ բարեբախտաբար կարողացանք ներգրավել համալսարանական պրոֆեսորների, ինչպես նաեւ տարբեր ոլորտների՝ առողջապահության, տրանսպորտի եւ այլ ծառայությունների փորձագետների: Այսպիսով մենք լայնացրինք շփման եւ համագործակցության շրջանակը՝ ռազմականից դեպի քաղաքացիականը: Այժմ նոր ուղղություններ ենք որոնում, տարբեր մասնագետներ ենք ուզում բերել Հայաստան, իսկ հայ մասնագետներին հրավիրել Կանզաս՝ համագործակցությունը խորացնելու համար»:

Դեյվ Յանգը տպավորված էր Արտակարգ ալիքի հնարավորություններով ու գործունեությամբ. «Հանրային իրազեկումը չափազանց կարեւոր է յուրաքանչյուր աղետի ու արտակարգ իրավիճակի արձագանքման համար: Հայաստանում դա արդեն հասկացել են եւ բավական առաջ են գնացել ՁԼՄ-ների աշխատանքը համակարգելու ոլորտում՝ վստահ լինելու համար, որ եւ հասարակությունը, եւ կառավարման մարմինները անհրաժեշտ տեղեկատվություն կստանան աղետների ժամանակ: Այս մի տարվա ընթացքում տեղի ունեցած առաջընթացը նկատելի է եւ տպավորիչ»:

Սեմինարի կարեւորությունը գնահատեցին նաեւ տեղացի հայ մասնագետները:

- Հիվանդությունների արձանագրումը՝ կլինի օդակաթիլային ճանապարհով տարածվող, թե աղիային վարակիչ հիվանդություն, դիտարկում ենք որպես արտակարգ իրավիճակ, եւ ինչպես ամեն արտակարգ իրավիճակի ժամանակ, այդպես էլ այս դեպքում կարեւոր է արագ արձագանքումը, կանխարգելիչ եւ հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը: Այս առումով այլ երկրների փորձին ծանոթանալը շատ արդյունավետ է,- ասաց Առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության գլխավոր մասնագետ Լիանա Թորոսյանը:

- Սեմինարի նշանակությունը շատ եմ կարեւորում, որովհետեւ Հայաստանը պատրաստվում է ԱՄՆ-ի հետ մեծ ծրագիր իրականացնել՝ կենսաբանական սպառնալիքների նվազեցումը Հայաստանում,- ասաց Արտակարգ իրավիճակների նախարարության ճառագայթային, քիմիական, կենսաբանական մոնիտորինգի բաժնի վարիչ Վալերի Բագիյանը:

Կանզասցիների այցի նպատակը միայն սեմինարը չէր: Ազգային գվարդիայի հրամանատար, գեներալ Թոդ Բանթինգը հանդիպումներ ունեցավ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատանը, Ոստիկանությունում, Պաշտպանության, Գյուղատնտեսության, Առողջապահության եւ Կրթության նախարարություններում, զրուցեց Ազգային ժողովի պատգամավորների հետ, այցելեց Հայոց Մեծ եղեռնի թանգարան:

>>> 4

Այս եւ մյուս երկուշաբթի օրերին, ժամը 19.00-ին, Հ2 հեռուստաընկերության եթերում է

«Արտակարգ ալիքը»

Կրկնությունը՝ ուրբաթ, ժամը 13.30-ին:

Հուլիսի 27-ին կարող եք դիտել.

- Հայ-ամերիկյան համագործակցության նոր փուլ: Հայաստանում է Կանզասի Ազգային գվարդիայի պատվիրակությունը՝ հրամանատար, գեներալ-մայոր Թոդ Բանթինգի գլխավորությամբ:

- Գետեր, լճեր, ջրամբարներ: Հայաստանում դրանցից ոչ մեկում լողալն ապահով չէ: Ի՞նչ է ջրահեղձումը, ինչպիսի խորհուրդներ են տալիս մասնագետները ջրահեղձումից խուսափելու, կենդանի եւ առողջ մնալու, խեղդվողին փրկելու համար:

- Փրկության զարմանալի պատմություն: Ինչպես են կամքի ուժն ու իրազեկվածությունն օգնել փրկելու սեփական կյանքը:

Այս եւ այլ թեմաների մասին՝ երկուշաբթի, 19.00-ին, Հ2-ի եթերում:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առեւտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Ուժեղ քամի

Հուլիսի 16-ին Վայոց ձորից տեղեկություն է ստացվել, որ հուլիսի 15-ին եւ հուլիսի 16-ի առավոտյան մոլեգնած ուժեղ քամին վնասել է Գոմք համայնքի բնակելի տների մոտ 30, Բարձրունի համայնքի բնակելի տների մոտ 10 տոկոսի տանիքները, ինչպես նաեւ համայնքների պտղատու այգիները:

Ուժեղ քամու հետեւանքները

Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ հուլիսի 16-ին, ժամը 10.00-ից 18.00-ի սահմաններում գրանցված ուժեղ քամու հետեւանքով վնասվել են Զառիթափ գյուղի մոտ 63 հա այգիներ, 12 հա բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքատարածքներ, ինչպես նաեւ Մարտիրոս գյուղի մոտ 5 հա այգիներ:

Վնասի չափերը ճշտվում են:

Փլուզում

Հուլիսի 17-ին Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ փլուզվել է Ագարակ քաղաքի Սայաթ-Նովա փողոցում գտնվող, Մ.Զաքարյանին պատկանող կիսակառույց տան 3-րդ հարկը:

Դեպքի վայր է մեկնել Մեղրիից մեկ մարտական հաշվարկ:

Հրշեջ-փրկարարների կողմից տուժածներ չեն հայտնաբերվել:

Թունավորումներ

* * *

Հուլիսի 17-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 22.25-ին սնկային թունավորումով Վանաձորի թիվ 1 հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Լանջային փողոցի թիվ 6 տան բնակիչ, 1944 թ. ծնված Ռազմիկ Բարխուդարյանը:

Բժիշկների կողմից տուժածի վիճակը բնութագրվել է ծայրահեղ ծանր:

* * *

Հուլիսի 18-ին սնկային թունավորումով Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի բնակիչ, 1928 թ. ծնված Աշոտ Ղեւոնդյանը, իսկ մյուս տուժածը՝ 1954 թ. ծնված Սամվել Ղեւոնդյանը, ստանալով առաջին բուժօգնություն, հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

Ըստ հերթապահ բժշկի՝ Ա.Ղեւոնդյանի առողջական վիճակը միջին ծանրության է:

Օձի խայթոց

Հուլիսի 18-ին, ժամը 17.30-ին օձի խայթոցով Աշտարակ քաղաքի հիվանդանոց է տեղափոխվել Արագածոտնի մարզի Նոր Եղեգիս գյուղի բնակիչ, 2003 թ. ծնված Արսեն Համբարձումյանը: Ըստ բժիշկների՝ երեխայի վիճակը գնահատվում է բավարար:

Ջրահեղձումներ

* * *

Հուլիսի 19-ին, ժամը 19.08-ին տեղեկություն է ստացվել, որ Հրազդան քաղաքի Մեծ ջրանցքում հայտնաբերվել է անձը չպարզված 40-45 տարեկան տղամարդու դիակ:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը: Տեղում պարզվել է, որ դիակը դուրս բերելու համար հարկավոր է իջեցնել ջրանցքի ջրի մակարդակը, եւ անհրաժեշտ է ջրափրկարարների ու ջրասուզակների օգնությունը:

Ժամը 21.00-ին կանչի վայր է հասել հատուկ ջրափրկարարական ջոկատը: Փակվել է Սեւանա լճից Ախպարա լիճ ջրի մատակարարումը, որը, սակայն, արդյունք չի տվել: Բաց է թողնվել Հրազդան ՀԷԿ-ի դերեւացիոն ջրանցքի ջրի պարունակությունը: Ջրափրկարարները եւ սուզակներն սկսել են որոնողական աշխատանքները:

Ժամը 04.04-ին ջրանցքից դուրս է բերվել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 3 շենքի 1-ին բնակարանի բնակիչ, 1976 թ. ծնված Արմեն Մելքոնյանի դին:

* * *

Հուլիսի 21-ին Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ Քաջարանի Ողջի գետի «Թթու ջուր» կոչվող հատվածում քաղաքացի է ջրահեղձ եղել, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Քաջարանի հրշեջ փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Հրշեջ-փրկարարների կողմից իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում Ողջի գետից՝ դեպքի վայրից մոտ 600 մ հեռավորության վրա, դուրս է բերվել Քաջարանի Բակունցի փողոցի թիվ 3/11 տան բնակիչ, 1964թ. ծնված Համլետ Անդրեասյանի դին եւ հանձնվել 1-03 ծառայության աշխատակիցներին:

Հետեւանքների վերացում

Հուլիսի 19-ին, ժամը 21.30-ի սահմաններում Շիրակի մարզի մի շարք բնակիչներից ստացվել են ահազանգեր, որ ուժեղ քամու հետեւանքով վնասվել են տների տանիքներ եւ էլ. հենասյուներ:

Հրշեջ-փրկարարների կողմից մարզի Բայանդուր գյուղում վնասազերծվել է Արմավիր-Գյումրի ավտոճանապարհին ընկած 6 ծառ: Ուժեղ քամուց գյուղում տապալվել է 3 էլ. սյուն, վնասվել 2 տան թիթեղյա տանիքի 80 տոկոսը, գյուղը հոսանքազրկվել է:

Քամուց կոտրված թիթեղյա ծածկից ստացված գլխի վնասվածքով Գյումրիի Գյուլբենկյանի անվան հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Վարդաբաղ թաղամասի բնակչուհի, 1965 թ. ծնված Լ. Երեմյանը: Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

Գյումրիի կայարանում մանեւրային աշխատանքներ կարգավորող գրասենյակի թիթեղյա տանիքը՝ մոտ 50 քմ մակերեսով, ընկել է գնացքների երթեւեկությունն ապահովող բարձր լարման էլ. լարերի վրա, երկաթուղու Գյումրի-Բայանդուր հատվածը հոսանքազրկվել է, տանիքների կոտրվածքներից վնասվել է 2 ավտոմեքենա:

Իրականացվել են վթարավերականգնողական աշխատանքներ:

Ազատան գյուղում վնասվել են՝ էլ.ենթակայանի տանիքը, 6 բնակելի տան տանիք՝ 180 քմ ընդհանուր մակերեսով, կտրվել են ցածր լարման էլ.լարերը, ինչի պատճառով գյուղը մասամբ հոսանքազրկվել է: Ծառը շրջվել է եւ վնասել ցածր ճնշման գազատարը, ինչի պատճառով 350-400 տուն գազազրկվել է:

Պեմզաշեն գյուղում ուժեղ քամին վնասել է 3 տան տանիք՝ 250 քմ ընդհանուր մակերեսով եւ պատուհանների ապակիներ:

Ընթանում են էլեկտրաէներգիայի եւ գազամատակարարման վերականգնման աշխատանքներ:

Ջոհվել է կռունկավարը

Հուլիսի 21-ին Կոտայքի մարզից տեղեկություն է ստացվել, որ, դեռեւս չպարզված հանգամանքներում, Հրազդան ՋԷԿ-ի կենտրոնական վերանորոգման արտադրամասում գտնվող վերամբարձ կռունկի խցիկից ընկել եւ զոհվել է կռունկավարը՝ Հրազդան քաղաքի բնակիչ, 1960թ. ծնված Ռ. Ամյանը:

Խցանում ջրակուտակումներից

Հուլիսի 21-ին Երեւան քաղաքի ճանապարհային ոստիկանությունից տեղեկատվություն է ստացվել, որ տեղացած հորդառատ անձրեւի հետեւանքով Քրիստափորի փողոցում առաջացել է անձրեւաջրերի կուտակում, ինչը խոչընդոտում է ավտոմեքենաների երթեւեկությանը եւ առաջացնում խցանումներ:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրշեջ-փրկարարները բացել են դիտահորերը, ինչի հետեւանքով ջրի մակարդարդակը նվազել է, ճանապարհը դարձել երթեւեկելի:

Անձրեւ, կարկուտ

Հուլիսի 22-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ հուլիսի 20-ին

>>> 3

միջազգային լուրեր

Փոթորիկ Ֆրանսիայում

Հուլիսի 17-ի գիշերը Փարիզի եւ մերձակա շրջանների փրկարար ծառայություններն արձագանքել են ավելի քան 160 կանչի: Պատճառը Ֆրանսիայի ավելի քան 50 շրջանների վրա հասած փոթորկային քամիները եւ ուժեղ ամպրոպներն էին:

Քամու ուժգնությունը տեղ-տեղ գերազանցել է 100 կմ/ժ: Փրկարար ծառայությունների հաղորդած տվյալներով՝ մարմնական վնասվածքներ է ստացել 9 մարդ, վնասվել է 29 ավտոմեքենա, տապալվել են բազմաթիվ ծառեր:

Փլվել է 200 մետրանոց կամուրջը

Շաբաթ օրը Մեքսիկայի Վերակրուս եւ Տաբասկո նահանգների սահմանին փլվել է Տոնալա գետով անցնող ավտոմեքենաների համար նախատեսված կամուրջը: Նախնական տվյալներով՝ կամրջի հետ գետն է ընկել հինգ ավտոմեքենա: Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ զոհվել է առնվազն ութ մարդ: Գետում իրականացվում են որոնողափրկարարական աշխատանքներ: Ըստ նախնական վարկածի՝ կամուրջը կարող էր փլվել կառույցի հենասյուների թերության կամ վերջին օրերին չդադարող տեղատարափ անձրեւների պատճառով:

Բուենոս Այրեսում ձյուն է տեղացել

Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսում ձյուն է տեղացել: Սա առաջինն է 2007 թվականի ամռանից հետո: Իսկ մինչ այդ վերջին անգամ Բուենոս Այրեսում ձյուն էր եկել 1918 թվականին:

Երեքշաբթի ողջ օրվա ընթացքում Բուենոս Այրեսում անընդհատ հորդառատ անձրեւ է տեղացել, որն ուղեկցվել է կայծակով, իսկ նախօրեին քաղաքի մի քանի շրջաններում սկսել է ձյունախառն անձրեւ գալ: Օդի ջերմաստիճանը նվազել է երեք աստիճանով, սակայն որոշ ժամանակ անց մայրաքաղաքի տարբեր շրջաններում սյուների վրա տեղակայված ջերմաչափերն արձանագրել են 0-ից ցածր ջերմաստիճան, սկսել է իսկական ձյուն տեղալ:

Տեղի օդերեւութաբանական ծառայությունների կանխատեսմամբ՝ ցուրտ եղանակը կպահպանվի մինչեւ շաբաթ օրը: Եվ եթե ջերմաստիճանը շարունակի զրոյից ցածր մնալ, չի բացառվում, որ քաղաքը ծածկվի ձյան հաստ շերտով:

Իսպանիան կրակի մեջ

Շաբաթվա սկզբից Իսպանիայում մոլեգնող հրդեհներն արդեն շուրջ 9 հազար հա անտառ եւ գյուղատնտեսական տարածք են ոչնչացրել:

Լուրջ իրավիճակ է ստեղծվել երկրի հյուսիսարեւելյան շրջանում՝ Կատալոնիայում: Այստեղ հրդեհների մարման աշխատանքներում ներգրավված է 500 մարդ, սակայն նրանց շատ հաճախ չի հաջողվում մոտենալ հրդեհի օջախներին: «Տեղանքի ռելիեֆը շատ բարդ է, բուսականությունը՝

շատ խիտ եւ անանցանելի: Մնում է սպասել ավիացիայի օգնությանը»- նշել է ավագ հրշեջներից մեկը:

Հրդեհները մոլեգնում են արդեն գրեթե ողջ երկրի տարածքով: Իրավիճակն էլ առավել է սրվում եղանակային պայմանների պատճառով. օդի ջերմաստիճանը հասնում է 38 աստիճանի, իսկ ուժեղ քամին նպաստում է կրակի տարածմանը:

Իսպանիան դիմել է հարեւան Ֆրանսիային եւ Պորտուգալիային՝ խնդրելով տեխնիկական աջակցություն տրամադրել հրդեհները մարելու համար:

Ա գրիպի հերթական զոհերը

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) դադարեցրել է տարբեր երկրներում Ա գրիպով վարակվածների վիճակագրական հաշվառումը: Ըստ ԱՀԿ ներկայացուցիչների՝ նման որոշում է ընդունվել՝ կապված վիրուսի տարածման աննախադեպ արագության հետ, որի պատճառով բժիշկները հաճախ չեն հասցնում լաբորատոր հետազոտություններ իրականացնել վարակման նոր դեպքերը հաստատելու համար:

Ավստրալիայում սկսել են Ա գրիպի վիրուսի դեմ պատվաստանյութի փորձարկումները: Հետազոտություններն իրականացվում են երկրի հարավում գտնվող Ադելաիդա քաղաքի երկու դեղագործական ընկերություններում: Յոթ ամսվա համար նախատեսված փորձարկմանը մասնակցում է 18-ից 64 տարեկան 240 կամավոր: Ընդհանուր առմամբ Ավստրալիայում գրանցված է Ա գրիպի վիրուսի ավելի քան 14 հազար դեպք, 41 մարդ մահացել է:

Բրազիլիայում խուճապ է բարձրացել. Ա գրիպի վիրուսով վարակվածների թիվը հասել է 21-ի: Պաշտոնական տվյալներով՝ այս վիրուսից մահվան ամենաշատ դեպքեր՝ 11 մարդ, գրանցվել է Ռիու Գրանդի նահանգում, որը գտնվում է Արգենտինայի հետ սահմանին:

Անցյալ շաբաթ խոզի գրիպից մարդու մահվան առաջին դեպքն է գրանցվել Հունգարիայում:

ԱՀԿ տվյալներով աշխարհում այս հիվանդության զոհ է դարձել մոտ 700 մարդ:

Ֆաինա Թյունիբաբյան

արագ արձագանքման ծառայություններ

<<< 2 տեղացած հորդառատ անձրեւի եւ կարկտի հետեւանքով վնասվել են Սասունիկ գյուղի խաղողի այգիները:

Վնասի չափերը ճշտվում են:

Հեղեղումներ Շիրակի մարզում

Հուլիսի 22-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 17.00-ի սահմաններում տեղացած հորդառատ անձրեւի հետեւանքով Զույգաղբյուր գյուղի հյուսիսային հատվածում հեղեղաջրերը դուրս են եկել սելավատարից եւ լցվում են բնակիչների տները:

Դեպքի վայր է մեկնել Աշոցքի հրշեջ փրկարարական ջոկատը:

Պարզվել է, որ ջուրը լցվել է բնակիչների տները, օժանդակ կառույցները եւ անասնագոմերը, խցանվել է գյուղամիջյան կամուրջը, ողողվել են կարտոֆիլի ցանքատարածքները, սատկել են ընտանի թռչուններ:

Գյուղապետարանի եւ գյուղի բնակիչների ուժերով իրականացվել են սելավատարի հունի եւ խցանված կամրջի մաքրման, տներից եւ օժանդակ կառույցներից ջրահեռացման աշխատանքներ:

Հասցված վնասի չափերը ճշտվում են:

Հեղեղումներ Լոռու մարզում

Հուլիսի 22-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 20.00-ի սահմաններում տեղացած հորդառատ անձրեւի հետեւանքով Վանաձորի Խնձորուտ թաղամասի «Խաչի ձոր» կոչվող հատվածում հեղեղաջրերը դուրս են եկել սելավատարից եւ հոսում են Երեւանյան եւ Զուխաջյան փողոցներով՝ լցվելով բնակելի տների նկուղները:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ սելավատարի հունի մաքրման ուղղությամբ: Ջրի հոսքը սելավատարով վերականգնվել է:

Ստացված մեկ այլ ահազանգի համաձայն՝ հորդառատ անձրեւի հետեւանքով վարարել է մարզի Տանձուտ գետի ջուրը, եւ Շահումյան գյուղի մի քանի տներին վտանգ է սպառնում:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ ափապաշտպան կառույցներն ուժեղացնելու նպատակով:

Շաբաթվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների բռնկման 84 դեպք:

Հուլիսի 16-ին, ժամը 15.28-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Տավուշի մարզի Ներքին Կարմիր աղբյուր գյուղում:

Դեպքի վայր է մեկնել Բերդից մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.55-ին, մարվել՝ ժամը 17.10-ին:

Հ. Բեգլարյանին պատկանող տան բակում այրվել է չոր խոտ՝ 800 քմ մակերեսով:

* * *

Հուլիսի 16-ին, ժամը 17.26-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Տավուշի մարզի Գետահովիտ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել Իջեւանից մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 18.00-ին, մարվել՝ ժամը 18.17-ին:

Այրվել է չօգտագործվող անասնագոմի տանիքը՝ 30 քմ մակերեսով:

* * *

Հուլիսի 17-ին, ժամը 23.09-ին ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզում՝ Հրազդան քաղաքի Ձոր. Անդրանիկի պողոտայում, ավտոմեքենա է այրվում:

Դեպքի վայր է մեկնել Հրազդանից մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է տեղի ուժերով:

Այրվել է Մ. Կոբալյանին պատկանող՝ «Մերսեդես» մակնիշի 61 OS 729 պետհամարանիշի ավտոմեքենայի շարժիչի տեղամասը:

* * *

Հուլիսի 18-ին, ժամը 04.59-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արմավիրի մարզում՝ Արմավիրի Մյասնիկյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 1 տանը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 05.21-ին, մարվել՝ ժամը 05.24-ին:

Այրվել է փայտյա էլեկտրական սյուն՝ մասամբ, եւ մեկ էլեկտրահաշվիչ՝ մալուխներով:

սեյսմիկ պաշտպանություն

Ս. թ. հուլիսի 16-ից 22-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել վեց երկրաշարժ: Հուլիսի 17-ին Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան սահմանային գոտում՝ Հադրութ (ԼՂՀ) քաղաքից 13 կմ դեպի հյուսիս-արեւելք, գրանցվել է թույլ երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ: Հաջորդ օրը տեղի է ունեցել նույն ուժգնությամբ 3 սեյսմիկ ցնցում: Առաջինը գրանցվել է թուրքական Բուլանիկ քաղաքից 29 կմ դեպի հարավ-արեւելք, երկրորդը՝ Ադրբեջանի Գյանջա քաղաքից 46 կմ դեպի հյուսիս-արեւելք, եւ երրորդ իրադարձությունը տեղի է ունեցել Վրաստանի տարածքում՝ Դմանիսի քաղաքից 20 կմ դեպի արեւմուտք: Հուլիսի 21-ին Ադրբեջանում (Նախիջեւան), Օրդուբադ քաղաքից 16 կմ դեպի հյուսիս--արեւմուտք, գրանցվել է 3 բալ ուժգնությամբ թույլ երկրաշարժ: Հաջորդ օրը Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ թուրքական Դողուբայազետ քաղաքից 36 կմ դեպի հյուսիս, տեղի է ունեցել 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով ուժեղ երկրաշարժ չի գրանցվել:

ՍՊԱԾ գործակալություն

շտապ օգնություն 103

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2372 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 384 մարդ: Եղել է մանկական 254 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 53 երեխա:

Գրանցվել են 29 մահ եւ 14 դժբախտ պատահար:

Հուլիսի 16

Վերին Չարբախի 6-րդ փողոցից 9 տարեկան Ա. Հովհաննիսյանը ստացած այրվածքներով տեղափոխվել է այրվածքների կենտրոն:

Հուլիսի 17

Դանակահարության հետեւանքով ստացած կրծքավանդակի եւ որովայնի ծակած վերքերով 23-ամյա Գ. Սիմոնյանը Շիրազի 80 հասցեից տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Արշակունյաց փողոցում վրաերթի է ենթարկվել եւ բազմակի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխվել 19-ամյա Ա. Արշակյանը:

Հուլիսի 19

Դեղորայքային թունավորում ախտորոշմամբ Բագրատունի 4-րդ նրբանցքից «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 32-ամյա Գ. Քոչարյանը:

Ներքին Չարբախում բարձրությունից ընկել եւ գլխուղեղի վնասվածքով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 55-ամյա Ջ. Հովհաննիսյանը:

Հուլիսի 20

Ծառից ընկել եւ բազմակի վնասվածքներով «Սբ Գր. Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 47-ամյա Խ. Մկրտչյանը:

Սարի թաղի 9-րդ փողոցից 3 տարեկան Ն. Մանուկյանը 2-րդ աստիճանի այրվածքներով եւ 27-ամյա Ա. Սարգսյանը 2-3-րդ աստիճանի այրվածքներով տեղափոխվել են այրվածքների կենտրոն:

Բարձրությունից ընկել եւ բազմակի վնասվածքներով «Սբ Գր. Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 41-ամյա Հ. Պետրոսյանը:

Ներքին Չարբախում դեղորայքից թունավորվել եւ «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 47-ամյա Ս. Սարգսյանը:

Հուլիսի 21

Երակների կտրած վերքով Նար-Դոսի փողոցից 1-ին համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել 47-ամյա Է. Հարությունյանը:

Քիմիական թունավորում ախտորոշմամբ Սարի թաղի 18-րդ փողոցից «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն է տեղափոխվել 2 տարեկան Ա. Վարդանյանը:

եղանակի տեսություն

Հուլիսի 19-ից 22-ը առանձին շրջաններում դիտվել են տեղումներ՝ 2-18մմ (Թալինում՝ 27մմ, Աշոցքում՝ 53մմ, Ծաղկահովիտում՝ 70մմ):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում՝ +32...+37^{0}C, Սյունիքի հովիտներում, Տավուշում եւ Արցախում՝ +30...+35^{0}C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում եւ լեռնային շրջաններում՝ +24...+29^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ +8...+13^{0}C, Տավուշում եւ Սյունիքի նախալեռներում՝ +11...+16^{0}C, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +17...+22^{0}C:

Հուլիսի 24-ին, 27-ին եւ 28-ին առանձին շրջաններում, 25-ին եւ 26-ին շրջանների մեծ մասում գիշերը եւ երեկոյան ժամերին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ: Քամին հարավարեւմտյան՝ 3-8մ/վրկ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 17-22մ/վրկ: Օդի ջերմաստիճանը էապես չի փոխվի:

Հայաստանի Հանրապետության ԱԻ նախարարություն

Հայաստանի փրկարար ծառայության

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Հայտարարում է 2009-2010 ուս. տարվա ընդունելություն հետևյալ մասնագիտություններով՝

Բարձրագույն կրթական ծրագրերով՝

- Ճգնաժամային կառավարում *(մասնագիտացումը՝ տնտեսագետ)*
- Հրդեհային պաշտպանություն *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*
- Քաղաքացիական պաշտպանություն *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*
- Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում *(մասնագիտացումը՝ մանկավարժ)*
- Փրկարարական գործ *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*
- Տրանսպորտային եւ հրշեջ փրկարարական հատուկ տեխնիկայի ու սարքավորումների շահագործում և տեխնիկական սպասարկում *(մասնագիտացումը՝ ճարտարագետ)*

Ուսուցման ձեւերը՝
- ցերեկային /առկա/ 4 տարի
- հեռակա 5 տարի

Ընդունելության քննությունները՝
- *Մաթեմատիկա* (բանավոր)
- *Հայոց լեզու* (թելադրություն)
- *Հայաստանի աշխարհագրություն* (հարցազրույց)

Մագիստրատուրա

- Ճգնաժամային կառավարում (հեռակա)
- Փրկարարական գործ (առկա)

Ուսման տևողությունը 2 տարի

Միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝

- Հրդեհային պաշտպանություն *(մասնագիտացումը՝ հրշեջ տեխնիկ)*
- Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում *(մասնագիտացումը՝ տեխնիկ)*
- Մենեջմենթ /կառավարում արտակարգ իրավիճակներում/ *(մասնագիտացումը՝ մենեջեր)*

Կրթության հիմքը՝

Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 2 տարի)
Հիմնական ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 3 տարի)

Ընդունելությունը՝ հարցազրույցով (ուսուցումը՝ քաղաք Ստեփանավան):

Միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցումը բարձր ցուցանիշներով ավարտածները կարող են ընդունվել բակալավրիատի 2-րդ կուրս:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը՝ 10^{00} - 17^{00}:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 61-47-60, 61-47-01, հասցե՝ ք. Երևան, Աճառյան 1:

փրկարար ԱԴԱԾ

Լողացեք միայն վերահսկելի վայրերում

<<< 1

Հուլիսի 22-ին գեներալ Բանթինգը եղավ նաեւ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունում, զրուցեց Փրկարար ծառայության տնօրեն գեներալ-լեյտենանտ էդիկ Բարսեղյանի, ԱԻ նախարար Մհեր Շահգելդյանի հետ: Քննարկվեցին ներկա եւ ապագա ծրագրերը, խոսվեց ակնկալիքների ու համագործակցության մասին:

- Մենք դիմում ենք միջազգային համագործակցությանը, որպեսզի ԱԻ Հայաստանի փրկարար ծառայությունը նմանեցնենք միջազգային հարուստ փորձ ունեցող ծառայություններին, որոնց պրոֆեսիոնալ մակարդակը շատ բարձր է: Այս առումով կարեւոր գործընկեր է նաեւ ԱՄՆ-ի Կանզաս նահանգը, որից վերջերս ստացել ենք փրկարարական համազգեստ: Այժմ նախատեսում ենք նաեւ ճգնաժամանային կառավարման կենտրոն ստեղծել, որի համար միջոցները հայթայթում ենք ԱՄՆ դեսպանատան, Կանզասի Ազգային գվարդիայի, այլ հեղինակային միջազգային կազմակերպությունների միջոցով: Մենք պիտի ստեղծենք 1-12 ծառայություն եւ ունենանք օրինակելի կենտրոն՝ Անդրկովկասի եւ, ինչու չէ, նաեւ Հյուսիսային Կովկասի մասշտաբով,- ասաց Հայաստանի փրկարար ծառայության պետ, գեներալ-լեյտենանտ էդիկ Բարսեղյանը:

- Մեր համագործակցությունը վերջին 5 տարիների ընթացքում շատ արդյունավետ էր: Միասին բազմաթիվ միջոցառումների ենք մասնակցել՝ վարժանքներ, ուսումնավարժություններ, կարծում եմ՝ մեր համագործակցությունը պայծառ ապագա ունի,- ասաց Կանզասի Ազգային գվարդիայի հրամանատար, գեներալ Թոդ Բանթինգը, *-Արտակարգ ալիքի մասին էլ պիտի ասեմ, որ տպավորված եմ հնարավորություններով եւ ծրագրերով: Այն կարեւոր դեր ունի արտակարգ իրավիճակները ժամանակին կանխարգելելու եւ արձագանքելու, հանրությանը իրազեկելու հարցում: Ձեր կարգախոսը՝ «Ով իրազեկված է, նա պաշտպանված է», մենք ընդօրինակել ենք Կանզասում:*

Գեներալ Թոդ Բանթինգը ծանոթացավ Հայաստանի փրկարար ծառայությունում գտնվող կանզասյան անկյան հետ, որտեղ տեղավորված են Կանզասից բերված հուշանվերները, չմոռանալով հիշեցնել, որ նման հայկական անկյուն կա նաեւ իրենց մոտ՝ Ազգային Գվարդիայի շենքում: Նա իր մաղթանքը գրեց նաեւ պատին փակցված բոյաչափի վրա. «Հիացմունքս ու հարգանքս եմ հայտնում մեր հայաստանցի գործընկերներին: Միասին մենք ուժեղ ենք»:

ՀՀ ԱԻ ՀՓԾ Ճգնաժամային կառավարման կենտրոնի տվյալներով, մինչեւ 2009 թվականի հուլիսի 23-ը, Հայաստանում գրանցվել է ջրահեղձության 12 դեպք, ինչի արդյունքում 11 մարդ զոհվել է, 3-ը՝ տուժել: Երեւանում եղել է 2 զոհ:

Ամեն տարի էլ ջրահեղձումների լուրջ թիվ է գրանցվում: Խեղդվողների մոտ 90 տոկոսը մինչեւ 35 տարեկան մարդիկ են:

Այսպիսով, վիճակագրությունն այսպիսին է՝

2005 թ. - 37 դեպք, 2 տուժած, 43 զոհ,

2006 թ. - 26 դեպք, 5 տուժած, 27 զոհ,

2007 թ. - 19 դեպք, 2 տուժած, 20 զոհ,

2008 թ. - 21 դեպք, 6 տուժած, 19 զոհ:

Գետեր, լճեր, ջրամբարներ: Հայաստանում դրանցից ոչ մեկում լողալն ապահով չէ: Այսօր մեզ մոտ վերահսկելի վայր է միայն Սեւանա լիճը, այն էլ՝ միայն որոշ հատվածներում. հանգստյան գոտիներում եւ որտեղ աշխատում են փրկարարները: Ի՞նչ է ջրահեղձումը, ինչպիսի խորհուրդներ են տալիս մասնագետները ջրահեղձումից խուսափելու, կենդանի եւ առողջ մնալու, խեղդվողին փրկելու համար:

Տիգրան Ասրյան, ՀՓՋ հրամանատարի տեղակալ

- Ջրահեղձումը դժբախտ պատահար է, երբ տուժողը խեղդվում է ջրային ավազաններում՝ գետեր, լճեր, լողավազաններ: Փոքր երխաները կարող են խեղդվել նույնիսկ մեծ ջրամաններում, իսկ հարբածները՝ անգամ փոքրիկ ջրափոսերում:

Տարբերում են երկու տեսակի

ջրահեղձում՝ կապույտ եւ սպիտակ:

Սպիտակը շնչուղիների փակումն է մկանների կծկումների պատճառով: Նման դեպքերում սպազմ է տեղի ունենում, ու խեղդվողը, առանց շնչուղիները ջուր լցվելու, անցնում է ջրի հատակը: Նման դեպքերում խեղդվածներն ավելի երկար են կենդանի մնում, որովհետեւ հասցնում են վերջին պահին եւս մի ներշնչում կատարել: Սպիտակ ջրահեղձման դեպքերն ընդհանուր թվի 5-20 տոկոսն են կազմում:

Կապույտ խեղդվածության դեպքում ստամոքսը, շնչուղիները, թոքերը լցվում են ջրով: Այդ դեպքում ավելի բարդ է նրանց վերակենդանացնելը, քանի որ վերջին պահին ջուր է լցվել շնչուղիները: Կապույտ ջրահեղձության դեպքերը 75-95 տոկոս են կազմում:

Սպիտակ եւ կապույտ խեղդվածությունները տարբերակում են դեմքի համապատասխանաբար սպիտակ եւ կապույտ գույներով:

Ջրահեղձման երկրորդային վիճակ էլ է լինում, երբ խեղդվում են՝ կապված երկրորդային ազդակների հետ, այսինքն՝ ջրում վնասվածք են ստանում, ինֆարկտ են ստանում, կամ դեպի գլխուղեղ արյան մատակարարում չի լինում ու այդ վիճակում խեղդվում են:

Արտակ Էլմասակյան, ՀՓՋ ջրասուզական խմբի հրամանատար

-Երբ ջրահեղձված մարդուն դուրս են բերում ջրից, ու նա անգիտակից է, պետք է նախ ստուգել շնչառության եւ սրտի աշխատանքի առկայությունը:

Եթե չկա շնչառություն, բայց կա սրտի աշխատանք, նշանակում է՝ մահ չի արձանագրվել: Ամենաառաջին գործողությունը՝ բացել շնչուղիները, եթե այնտեղ կողմնակի առարկա կա, հեռացնել: Այնուհետեւ՝ կատարել երկու ստուգողական ներշնչում: Եթե օդը գնաց, ապա պետք է յուրաքանչյուր 5 վայրկյանը մեկ կատարել մեկ ներշնչում, միաժամանակ ստուգելով զարկերակի առկայությունը:

Եթե բացակայում են եւ զարկերակը, եւ շնչառությունը, նախ նորից կատարում են երկու ստուգողական ներշնչում: Եթե օդը չի գնում, շուռ ենք տալիս փորի վրա, դնում ենք ծնկներին, սեղմում ենք, շնչուղիներից եւ փորից դուրս ենք բերում ջուրը, կողմնակի առարկաները: Նորից պառկեցնում ենք մեջքի վրա, համապատասխան դիրքով՝ գլուխը հետ, որ օդ փչել հնարավոր լինի: Եթե երկու անգամ փչում ենք ու օդը գնում է, կատարում ենք 15 սեղմում կրծքավանդակի համապատասխան տեղում՝ սրտի անուղղակի մերսում անելու նպատակով: Կա երկու մեթոդ. առաջին՝ 4 փուլ՝ 4 անգամ մեկ փչում, 15 սեղմում, երկրորդը Կարմիր խաչի առաջարկածն է՝ 150 սեղմում 10 փչումով: Որը կարողանում ենք, անում ենք: Կատարում ենք այնքան, մինչեւ վերականգնվեն շնչառությունն ու սրտի աշխատանքը: Սկզբում որպես կանոն հայտնվում է զարկերակը, հետո՝ շնչառությունը: Եթե ժամանակը անցնում է, միեւնույն է՝ չենք դադարեցնում, մինչեւ արհեստավարժ փրկարարի կամ բժշկի մոտենալը:

Սովորաբար մարդու կլինիկական մահը տեւում է 3-5 րոպե, հետո գալիս է կենսաբանականը: Սակայն անկախ այն բանից, թե որքան ժամանակ է անցել, կամ երբ ենք հանել ջրահեղձին ջրից, պետք չէ դադարեցնել սրտաթոքային վերականգնման աշխատանքները: Պետք է շարունակել մինչեւ մասնագետի ժամանումը:

Եթե մարդը խեղդվում է, աղետի նշաններ է ցույց տալիս, պետք է նախ փորձել փրկել նրան դրսից՝ ափից ինչ-որ բան նետելով՝ պարան, շորի կտոր, գնդակ: Նույնիսկ Կոկա-կոլայի 2 լիտրանոց դատարկ շիշը, եթե խցանով փակված է, կարող է օգնել խեղդվողին մի որոշ ժամանակ ջրից դուրս պահել շնչուղիները: Երբ լողով ենք մոտենում, շատ վտանգավոր է, որովհետեւ խեղդվողը ֆիզիկապես ուժեղանում է այդ պահին, աշխատում են կյանքի պահպանման ռեֆլեքսները: Եթե փրկողը մոտենում է, ապա պիտի վերջին պահին մի փոքր սուզվի ու խեղդվողին մոտենա մեջքից, որովհետեւ հեղձվողը միեւնույն է, երբ տեսնում է լողով իրեն մոտեցողին, երեսով անընդհատ շրջվում է դեպի նա եւ կարող է այնպես պինդ բռել, որ երկուսով խեղդվեն: Նման դեպքեր շատ են լինում:

Հրազդանի կիճում լողալը իրականում շատ վտանգավոր է, մեր ժողովրդի մեջ թյուր կարծիք կա, թե այստեղ խորություն, վտանգ չկա: Իրականում սա արագընթաց գետ է եւ ունի խորություններ, կա ջրի մակարդակի հանկարծակի բարձրացման վտանգ՝ մինչեւ 3 մետր: Երբ Երեւան ՀԷԿ-ի վերին ջրամբարտակը բացում են, ալիքային հարվածը ուժեղանում է, կարող է նույնիսկ մարդուն ծանծաղ տեղում այնպես սեղմել մի քարի, ծառի, ճյուղի կամ արմատի տակ, որ նա դուրս չգա: Երկրորդ վտանգավորությունը. իրականում Հրազդան գետը շատ խոր կետեր ունի, խարդախ որոգայթներ, որոնք կարող են մարդուն ներքաշել ու պահել: Վտանգավոր են նաեւ արհեստական ջրվեժիկները. ջուրը դրանց բետոնապատնեշի տակից սովորաբար իր համար կարճ ճանապարհ է բացում դեպի գետի ներքին դելտան: Ու այդ անցքերը շատ վտանգավոր են, դրանք ցեխային են ու կարող են անսպասելի բացվել-փակվել եւ շատ մեծ ուժով իրենց մեջ ջուր քաշել: Ոչ ոք, նույնիսկ լողի օլիմպիական չեմպիոններն ի վիճակի չեն դիմադրել այդ քաշող ուժին: Նման անցքերը չեն երեւում, որովհետեւ անընդհատ բաց չեն:

Երրորդ պատճառն այն է, որ գետը սանիտարահիգիենիկ նորմերին բացարձակապես չի համապատասխանում: Այստեղ են թափվում բազմաթիվ գյուղերի գոմաղբ, կոյուղի: Տարբեր հիվանդություններ ստանալը շատ հեշտ է:

Լողալը վտանգավոր է նաեւ Երեւանյան լճում: Այն սարսափելի աղտոտված է, ափային տարածքը արագ գահավիժում է, խորությունը մեծ է: Մակերեսը խաղաղ է, բայց հատակում արագ ջրի հոսք կա: Լճի հատակում կան շատ ծառերի բներ, արմատներ, պարաններ, թելեր, կենցաղային աղբ: Դրանք, փաթաթվելով մարդուն, իրավիճակը դարձնում են անկառավարելի: Մարդիկ խուճապի են մատնվում, ինչի արդյունքում արագ խեղդվում են: Բացի դրանից այստեղ անզգուշաբար ցատկելու դեպքում հնարավոր է գլխով հարված ստանալ: Երեւանյան լճում եւ ընդհանրապես ամեն տեղ ջրիմուռներն ամուր են դարձել, էլ առաջվա փափուկ ջրիմուռները չեն, որ ձեռքով կարողանաս պոկել: Այնպես որ, դրանք էլ են վտանգավոր: Սանիտարահիգիենիկ պայմաններն այստեղ նույնպես բացակայում են: Ինչ ճիճուներ ասես, որ չեն լողում ջրում:

Ավետիս Մանուկյան, ՀՓՋ հրամանատար

Այս տարի Երեւանում արձանագրվել է երկու ջրահեղձման դեպք, մեկը՝ Հրազդանում, մյուսը՝ Երեւանյան լճում: Այս երկու վայրերում էլ լողալը խիստ վտանգավոր է: Վտանգավոր են նաեւ Երեւանից դուրս գտնվող մյուս գետերն ու լճերը, քանի որ դրանք փրկարարների կողմից չեն վերահսկվում: Պետք է լողալ միայն Սեւանում, այն էլ միայն որոշ ափե-

րում՝ փրկարարների աչքի տակ: Ծնողներին խորհուրդ է տրվում ուշադիր լինել, որ երեխաները պատահական վայրերում չլողան, նույնիսկ սովորական հանրային լողավազանները կարող են վտանգավոր լինել թե խեղդվելու, թե սանիտարահիգիենիկ առումներով: Փորձը ցույց է տալիս, որ խեղդվողների մեծ մասը լինում է ալկոհոլի ազդեցության տակ: Դրա համար էլ կոչ ենք անում. ալկոհոլ օգտագործելուց հետո ջուրը մի՛ մտեք:

Անի Ստեփանյան

Պատահարներ ջրում

Հայաստանում բավական շատ են լինում ջրահեղձման ողբերգական դեպքեր: Դուք ինքներդ էլ երեւի հաճախ լսում եք Սեւանա լճում եւ այլ ջրավազաններում մարդկանց ջրահեղձվելու մասին: Այս հարցը հատկապես արդիական է հիմա՝ ամռան այս շոգ ամիսներին, երբ Սեւանա լիճը դառնում է ամենասիրելի հանգստի գոտիներից մեկը:

Ջրում պատահար կարող է տեղի ունենալ յուրաքանչյուրի հետ, անկախ այն բանից, թե որքան լավ լողորդ է նա: Նույնիսկ լավ լողորդը կարող է ջրահեղձ լինել հանկարծահաս հիվանդության կամ հոգնածության պատճառով:

Ինչ անել

Պատահարը գնահատելու համար եղեք զգոն եւ ուշադիր ցանկացած արտասովոր նշանի նկատմամբ: Դուք կարող եք նկատել լողորդի տարօրինակ վարքագիծը, լսել նրա ճիչը կամ ջրի հանկարծակի ճողփյուն: Հաշվի առեք, որ ջրում խեղդվող մարդկանց մեծ մասն օգնություն կանչել չի կարողանում: Նրանք ամեն ինչ անում են գլուխը ջրի մակերեսին պահելու համար: Ուշադիր եղեք, եւ եթե տեսնում եք որեւէ մեկին, որը ջրում տարօրինակ շարժումներ է անում կամ փորձում է լողալ եւ առաջ չի գնում, ապա հնարավոր է, որ նա օգնության կարիք ունի:



Պատահարը ճանաչելուց եւ գնահատելուց հետո, ինչպես յուրաքանչյուր դժբախտ պատահարի դեպքում, գործեք զգուշորեն: Եթե տուժածը գտնվում է ջրում, ապա առաջին հերթին փորձեք նրան օգնություն ցույց տալ առանց ջուր մտնելու: Օգնելու նպատակով ջուր նետվելով՝ դուք նույնպես կարող եք տուժած դառնալ:





Քաջալերեք ջրում գտնվող տուժածին, խոսեք նրա հետ: Հնարավոր է, որ հետեւելով ձեր հանգիստ եւ քաջալերող խորհուրդներին՝ տուժածն ինքնուրույն հասնի ապահով տեղ: Հակառակ դեպքում դուք կարող եք նրան մեկնել որեւէ առարկա, օրինակ՝ ձող, ծառի ճյուղ, գոտի եւ այլն: Երբ տուժածն ամուր բռնի առարկայից, մի փոքր կռացեք եւ մարմնով հետ ընկնելով՝ դանդաղ ու զգուշորեն քաշեք նրան դեպի ապահով տեղ: Եթե ձեռքի տակ ոչ մի հարմար առարկա չունենք, պառկեք ջրավազանի եզրին եւ ձեր ձեռքը մեկնեք տուժածին:

Ձեզանից հեռու գտնվող տուժածին փրկելու համար կարելի է նրա կողմը նետել ջրի մակերեսին լողացող որեւէ առարկա՝ պարանով կապած: Օրինակ՝ փրկարար օղակ, կիսով չափ ջրով լցված պլաստմասսայե տարողություն, անվադող եւ այլն:

Կանգնեք նետող ձեռքի կողմի ոտքը մի փոքր հետ, իսկ մյուս ոտքով կանգնեք պարանի ծայրին: Պարանի կեսը փաթաթած վիճակում պահեք ձեր մի ձեռքում, մյուսով նետեք առարկան՝ ներքեւից դեպի վեր ուղղված շարժումով: Փրկարարական միջոցը նետեք տուժածից մի փոքր հեռու, այնուհետեւ քաշելով բերեք նրան մոտ: Ասեք տուժածին, որ ամուր բռնվի դրանից: Երբ տուժածն ամուր կառչի առարկայից, մարմնով հետ ընկնելով՝ դանդաղ եւ զգուշորեն քաշեք նրան դեպի ապահով տեղ:

Որոշ դեպքերում, եթե համոզված եք, որ ջուրը ծանծաղ է եւ կանգնած վիճակում չի ծածկում ձեր գլուխը, տուժածին փրկելու համար կարող եք մտնել ջուրը: Գտնվելով ջրի մեջ՝ դարձյալ ավելի ապահով է տուժածին որեւէ առարկա մեկնելը: Աշխատեք այնպես անել, որ առարկան լինի ձեր եւ տուժածի միջեւ, որպեսզի վերջինս չկառչի ձեզնից:

Եթե կարող եք տուժածին հասնել, եւ եթե նա երեսնիվայր է պառկած ջրի մեջ, զգուշորեն շրջեք նրան եւ թեւատակերից բռնելով՝ հետ-հետ քայլելով տեղափոխեք նրան ջրի միջով մինչեւ լողավազանի եզրը, հետո հանեք նրան ջրից:

Եթե կասկածում եք, որ տուժածն ունի ողնաշարի վնասվածք, ապա ձեր հիմնական խնդիրը տուժածի դեմքը ջրից դուրս պահելն ու գլխի եւ ողնաշարի շարժումները կանխելն է: Այդ նպատակով զգուշորեն բռնեք նրա բազուկներից, վեր բարձրացրեք ձեռքերը գլխի երկայնքով: Տուժածի ձեռքերը գլխին սեղմելով՝ նրան շրջեք երեսով դեպի վեր: Մի ձեռքով պահեք տուժածի գլուխը բազուկների միջեւ, իսկ մյուս ձեռքը անցկացրեք ազդրերի տակով: Աշխատեք տուժածի մարմինը պահել հորիզոնական դիրքով՝ դեմքը ջրից դուրս: Մինչեւ օգնության ժամանումը պահեք տուժածին ջրի մեջ այս դիրքում:

Տուժածին ափ հանելուց հետո շնչուղիներից ջրի եւ այլ հեղուկների արտահոսքն ապահովելու համար նրան շրջեք երեսնիվայր, այնուհետեւ զննեք տուժածին եւ գործեք իրավիճակին համապատասխան:

Եթե ինքներդ եք հայտնվել խեղդվողի դերում, առաջին հերթին խուճապի մի՛ մատնվեք, փորձեք օգնության ազդանշան տալ եւ մնալ ջրի երեսին, մինչեւ օգնությունը հասնի:

Եթե անսպասելիորեն ջուրն եք ընկել, ջրի վրա լողալու կամ ջրի մակերեսին մնալու համար հնարավոր է, որ հագուստը ձեզ խանգարի եւ այն հանելու կարիք





լինի: Սակայն որոշ դեպքերում կարող եք օգտագործել ձեր հագուստն հօգուտ ձեզ: Եթե ձեզ հաջողվի օդ հավաքել վերնաշապիկի ուսերի մասում, ապա փրկվելն ավելի հեշտ կլինի: Դրա համար հանգուցեք վերնաշապիկի ստորին եզրերը կամ վերնաշապիկը դրեք անդրավարտիքի գոտու տակ: Խորը շունչ քաշեք, գլուխը թեքեք առաջ, քաշեք վերնաշապիկը դեպի վեր եւ փչեք վերնաշապիկի բացվածքի մեջ: Ներփչած օդը բարձրանում եւ վերնաշապիկի ուսերի հատվածում բուշտ է առաջացնում, որն օգնում է ձեզ մնալ ջրի մակերեսին:

Կանխարգելում

Ջրում տեղի ունեցող դժբախտ պատահարներից խուսափելու համար անհրաժեշտ է պահպանել անվտանգության հետեւյալ կանոնները:

Երեխաներին մի թողեք ջրի մոտ առանց հսկողության:

Միշտ ձեռքի տակ ունեցեք փրկարար լողունակ միջոցներ:

Երբեք մենակ ջուր մի մտեք եւ միայնակ մի լողացեք, ինչքան էլ հիանալի լողորդ լինեք:

Ջրի մոտ գտնվելիս ոգելից խմիչքներ մի՛ օգտագործեք:

Լողալու ընթացքում կատակներ մի արեք՝ իրար մի քաշքշեք, փորձեք սուզել եւ այլն: Նման կատակները հաճախ դժբախտ պատահարների պատճառ են դառնում:

Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն

Ջուր, ջուր, չորս կողմը ջուր

Էլ ի՞նչ ամառային հանգիստ առանց լողալու: Զանձրույթ, ուրիշ ոչինչ: Հատկապես, երբ արեգակը դաղում է, իսկ լճի կամ գետի սառը ջուրն այնպե՞ս իր կողմը ձգում, այնպե՞ս է սուզվելու հրավիրում:

Սուզվել եւ լող տալ. դա լավ է, անգամ՝ օգտակար: Իսկ ավելի լավ է լողալ հարմարավետությամբ: Կարծում ես, խորհուրդ ենք տալիս լողալ միայն լողավազանու՞մ կամ ջակուզիու՞մ: Ամենեւին: Բայց մանրուքները (իսկ իրականում՝ նույնիսկ շատ մեծ հանգամանքները), որոնց մասին դու չես էլ մտածել՝ կարող են փչացնել ամբողջ բավականությունը: Որո՞նք են այդ «մանրուքները»: Ահա դրանք:

Ամենից առաջ մեծահասակներին հարցրու, ընդհանրապես արժե լողալ այդ գետում, լճակում. այդտեղ ջուրն արդյո՞ք բավականաչափ մաքուր է: Թե չէ ձեռք կբերես մի որեւէ վարակ եւ կբուժվես ամբողջ ամառ:

Երբեք մի լողացիր միայնակ, անծանոթ տեղում: Ասենք, ծանոթ վայրում եւս: Եվ երբեք մենակ լող մի տուր ափից հեռու. միայն այն ընկերների հետ, որոնք քեզանից վատ չեն լողում: Մի՞թե քիչ բաներ են պատահում... բացի այդ էլ տխուր է մենակ, ճիշտ չէ՞: Իսկ ընդհանրապես հիշիր, որ ամենից անվտանգ է լողալ այն ջրատարածքում, որը մեկուսացված է խարսխավոր լողաններով: Հավատա, դրանք հենց այնպես չեն տեղակայվում:

Սառը ջրի մեջ մտիր դանդաղ, հատկապես, եթե այս սեզոնում դա քո առաջին լողալն է: Այլապես կարող է ջղաձգվել ոտքդ կամ էլ գլխապտույտ ունենաս:

Սուզալող մի տուր եւ զառիվայրից ջրի մեջ մի թռիր, եթե վստահ չես, որ հատակը մաքուր է: Նախ լող տուր, իսկ ավելի լավ է՝ տեղի երեխաներից իմացիր, արդյո՞ք ջրի տակ չկան թաղված գերաններ կամ ամրաններ, երկաթի ժանգոտած կտորներ, որոնցից կարելի է վիրավորվել:

Մի լողացիր այն լճում, ջրամբարում, որտեղ լողում են մոտորանավակներ: Կամ գոնե դրանցից հեռու մնա: Նավակի ալիքը կարող է քեզ գլխով մեկ ծածկել. խիստ կասկածելի ու ոչ անվտանգ հաճույք: Իսկ եթե դու լողում ես նավակին շատ մոտ՝ կարող ես ընկնել շարժիչի պտուտակների տակ:

Եթե դու վատ ես լող տալիս, ափից մի հեռացիր: Այնպես որ ցանկացած պահի հնարավոր լինի ոտքերով հպվել հատակին: Եվ քեզանից լավ լողացող ընկերների հորդորներին մի ենթարկվիր: Նրանց համար զվարճանք է, իսկ դու ջուր կուլ տալու ռիսկի ես դիմում: Նոր ես լողալ սովորու՞մ՝ այդ դեպքում գոտկատեղիցդ խոր մի մտիր:

Հոգնեցի՞ր լողալ՝ հանգստացիր: Գերլարվածությունից կարող են ջղակծկումներ սկսվել: Մի ձգտիր լողի ռեկորդ սահմանել: Միեւնույն է համաշխարհային ռեկորդը չես հաղթի:

Եվ վերջին խորհուրդը. երկար մի լողացեք: Որքան էլ տաք թվա ջուրը, գերսառելն ու հիվանդանալը՝ պարզից էլ պարզ է: Հենց սկսես ծածկվել «սագի մաշկով», իսկ ատամներդ էլ սկսեն կափկափել, անմիջապես ջրից դուրս եկ: Դրանից հետո ցամքոցով լավ չորացիր, տաքացիր արեւի տակ, մի քիչ վազիր, խաղա գնդակով եւ կրկին լող տուր:

Ջրհեղեղներ

Վախի գիշեր Համբուրգում

Նման վատ եղանակ Համբուրգի բնակիչները դեռ չէին տեսել: Արդեն մի քանի օր փչում էր ոչ այնքան ուժեղ, բայց շարունակական քամի՝ էլբա գետ բերելով ծովի ալիքները: Եվ էլբան, որը թափվում է Բալթիկ ծով, ի վերջո, դուրս եկավ ափերից ու սկսեց շարժվել հակառակ ուղղությամբ՝ դեպի իր երկու ափերին փռված քաղաքը: Դա տեղի ունեցավ 1962 թվականի փետրվարի 16-ի գիշերը: Ջուրը հորդում էր Համբուրգի փողոցներով, հրապարակներով՝ ծածկելով դրանք ջրի մեկ մետրանոց շերտով, հետո երկու մետրանոց, երեք...

Բեռլինից հետո Գերմանիայի Դաշնային Հանրապետության մեծությամբ երկրորդ քաղաքը, որ գտնվում է Բալթիկ ծովից հարյուր կիլոմետր հեռավորության վրա, մասնակիորեն անցավ ջրի տակ: Փողոցներում հայտնված բարձր ջրի պատճառով ամբողջությամբ դադարեցվեց տրանսպորտային հաղորդակցությունը, վնասվեցին հեռախոսային գծերը, շենքերում չէին գործում վերելակները, խափանվել էր ջրի եւ գազի մատակարարումը: Մարդիկ ընդհանրապես չէին կարողանում դուրս գալ տներից՝ ամենուրեք ջուր էր:

Հատկապես ծանր կացության մեջ էին հայտնվել առաջին հարկերի բնակիչները: Նրանք ստիպված էին գիշերը փախչել իրենց տներից: Բայց ու՞ր: Մթության, սառնության մեջ մարդիկ դուրս էին գալիս պատուհաններից, փորձում բարձրանալ ձեղնահարկեր կամ տանիք: Շատերը սայթաքում եւ ընկնում էին հենց այն ջրի մեջ, որից ուզում էին փրկվել: Ջուրն ընդամենը յոթ-ութ աստիճան ուներ, իսկ բարձրությունը հասնում էր երեք մետրի: Լողալ չիմացողների համար դա անխուսափելի մահ էր: Իսկ ի՞նչ անեին տարեցները, դեռ չքայլող փոքրիկները: Ոչ նավակներ, ոչ էլ փրկարարական այլ միջոցներ ձեռքի տակ չկային:

Ջրային պաշարման ենթարկվեց քաղաքի Վիլհելմսբուրգ թաղամասը, որն ամբողջությամբ անցավ ջրի տակ: Տարերքը մոլեգնեց մի ամբողջ օր, իսկ փետրվարի 17-ի գիշերը ջրի ճնշմանը չդիմացան քաղաքը պաշտպանող ամբարտակները: Վերջիններս փլվեցին, եւ ազատություն ստացած ալիքները շարունակեցին իրենց մահաբեր երթը Համբուրգի փողոցներով: Ջրի մակարդակը հասավ չտեսնված չափի՝ 5,7 մետրի: Քաղաքին սպառնում էր ամբողջական հեղեղում:

Մարդիկ այլեւս չէին սպասում օգնության: Ինչպես հաճախ է պատահում, առաջնորդվելով «խեղդվողների փրկությունը հենց իրենց՝ խեղդվողների գործն է» տխուր սկզբունքով, քաղաքի տուժած բնակիչները փայտից եւ կահույքից պատրաստում էին լաստանավակներ, շարունակում մագլցել տանիքները: Թրջված, մրսած, առանց սննդի եւ տաք հագուստի նրանք չէին կարող երկար ժամանակ դիմանալ: Շատերը սայթաքում էին տանիքներից, ծառերից եւ ընկնում սառցե ջուրը:

Էլբայի նման անսպասելի հեղեղում, այն էլ ձմռանը, ոչ ոք չէր կանխատեսել, թեեւ քաղաքային իշխանություններն ունեին ջրհեղեղի դեպքում մարդկանց փրկելու հակաճգնաժամային ծրագիր: Ոչ ոք չէր սպասում ջրի մակարդակի նման բարձրացում մեկ օրվա ընթացքում, ուստի ամեն ինչ կազմակերպվում եւ արվում էր առանց նախապատրաստման:

Մարդկանց փրկելու աշխատանքները համակարգում էր Սաքսոնիայի կառավարության ներքին գործերի նախարար Հելմուտ Շմիդտը՝ Գերմանիայի ապագա կանցլերը: Նրա կարգադրությամբ փրկարարական գործողություններին ներգրավվեցին բանակայիններ: Իրենց օգնությունն առաջարկեցին նաեւ դաշնակից ամերիկացի զինվորականները: Վերջիններս տրամադրեցին նավակներ եւ ուղղաթիռներ: Այսպես Համբուրգի փողոցներում հայտնվեցին ռետինե նավակներ՝ գերմանացի եւ ամերիկացի զինվորներով, երկնքում երեւացին ուղղաթիռներ:

Զինվորները տանիքներից եւ ծառերից, հեղեղված տներից փրկեցին ավելի քան քսան հազար մարդու: Մոտ երկու հարյուր փոքր դեսանտային եւ 140 փչովի նավակ վենետիկյան գոնդոլների նման շարժվում էին հեղեղված փողոցներով: Նավակներում կային տաք սնունդ, խմելու ջուր, ծածկոցներ:

Միայն մի քանի օր անց ջուրը նահանջեց եւ տարերքն ի վերջո հանդարտվեց: Հենց այդ ժամանակ էլ բացահայտվեցին աղետի իրական չափերը՝ զոհվել էր 337 մարդ, 75 հազարը մնացել էին անօթեւան, իսկ ընդհանուր վնասը հասավ երեք միլիարդ գերմանական մարկի: 1962 թվականի փետրվարի 17-ը Համբուրգի բնակիչների համար դարձավ սեւ օր:

Ջուրը փանում է ամեն ինչ

1991 թվականի ապրիլի վերջին Բենգալյան ծոցում մոլեգնում էր հերթական փոթորիկը: Բարձրացել էր ուժեղ քամի, որը ժամ առ ժամ հզորանում էր: Հետո սկսվեցին անձրեւները, որոնք շուտով վերածվեցին ուժգին արեւադարձային տեղատարափի: Ջրի հսկայական քանակից առափնյա շրջաններում հողը դարձել էր ջրախառն զանգված:

Բենգալյան ծոցի ափերում ուժգին փոթորիկները հաճախակի երեւույթ են: Գրեթե ամեն տարի այստեղ մոլեգնում է տարերքը: Տեղի բնակիչները քաջատեղյակ են բնության այս ահեղ երեւույթներին եւ ընտելացել են դրանց: Ժամանակին քամիների արագությունը հասել է 100-150 կմ/ժ-ի: Բարձր ալիքները սրբել-տարել են ոչ միայն մարդկանց եւ կենդանիների, այլեւ սայլեր ու մեքենաներ:

Սակայն այս անգամ քամին չէր ուզում հանդարտվել, եւ ըստ օդերեւութաբանների, ապրիլի 29-ին քամու ուժգնությունը հասավ 235 կմ/ժ-ի: Նման բան դեռ երբեք չէր եղել: Ծովափում արմավենիները բառացիորեն հորիզոնական դիրք էին ընդունել, քամին պոկում էր փայտյա տների տանիքները, արմատախիլ անում դարավոր ծառերը: Արեւադարձային մրրիկների հարձակումներին լավ ծանոթ մարդիկ այս անգամ թաքնվել էին ափից բավական հեռու՝ բետոնե կառույցներում, որտեղ էլ պատրաստվում էին սպասել տարերքի հանդարտմանը: Բայց վատ եղանակը չէր նահանջում: Մրրիկը եւ մի քանի օր շարունակվող փոթորիկն ու անձրեւը հանգեցրին հսկայական ալիքի՝ ցունամիի առաջացման: Վերջինիս բարձրությունը տարբեր տվյալներով հասնում էր 6-10 մետրի: Բայց սարսափելին նույնիսկ բարձրությունը չէր, ափն իր վրա էլ ավելի բարձր ալիքներ էր զգացել: Այս անգամ դա ջրի մի հսկայական զանգված էր, նույնիսկ ուղղաթիռից դժվար էր տեսնել ալիքի երկարությունը:

Եվ այդ ամբողջ զանգվածը՝ մոտ մի քանի միլիոն տոննա ջուրը հորդեց Բանգլադեշի հարավային ափ՝ ճանապարհին սրբել-ոչնչացնելով ամեն ինչ: Թվում էր՝ ծովը տեղաշարժվել եւ փոխել է իր սահմանները: Ջրի տակ հայտնվեցին վաղեմի արեւադարձային անտառների հազարավոր հեկտարներ, հեղեղվեցին բնակելի ավաններ, դրանք իրար միացնող ճանապարհներ, գյուղատնտեսական ցանքատարածություններ: Ընդհանուր առմամբ Բանգլադեշի այս շրջաններում ջուրը ոչնչացրեց բնակելի տների 85 եւ ցանքատարածությունների 90 տոկոսը:

Հատկապես տուժել էր Կուտուբիդիա կղզին, որտեղ ցունամին քշել-տարել էր գրեթե բոլոր տները: Ջրի զոհ էր դարձել 45 հազար մարդ: Շատերը մնացել էին անօթեւան, առանց սննդի եւ հագուստի:

Սանդվիպ կղզին, որտեղ բնակվում էր 300 հազար մարդ, կիսով չափ անցել էր ջրի տակ: Հստակ հայտնի չէ, թե որքան մարդ է զոհվել այստեղ: Հեղեղվել էր նաեւ ափին գտնվող Սիտագոնգ խոշոր նավահանգիստը, որն ուներ մեկ միլիոն բնակչություն: Քաղաքի փողոցներում մարդիկ ստիպված էին տեղաշարժվել միայն նավակներով: Հեղեղված օդանավակայանում ինքնաթիռների մեծ մասը բառացիորեն լողում էին ջրի մեջ: Վնասված ճանապարհների եւ փլուզված կամուրջների պատճառով լուրջ խնդրներ էին առաջացել մարդկանց սննդամթերք եւ այլ օգնություն տրամադրելու գործում: Ամենուրեք ջուր էր: Որոշ վայրեր հնարավոր էր հասնել միայն ուղղաթիռներով: Բնականաբար, օգնությունն ուշանում էր, հարյուրավոր մարդիկ մահանում էին սովից:

Նախնական եւ միայն մոտավոր հաշվարկներով հեղեղման հետեւանքով Բանգլադեշում մահացավ 140 հազար մարդ: Ավելի ուշ հնչեց մեկ ուրիշ թիվ՝ ավելի քան կես միլիոն մարդ:

Բանգլադեշը ցածրադիր վայր է, որով անցնում է երկու խոշոր գետ՝ Գանգեսը եւ Բրահմապուտրան, ուստի ջրի պակաս այստեղ չի զգացվում: Բավարար է նաեւ արեւի ջերմությունը: Դրանից հողի վրա հաճախ են գոլորշիացումներ լինում, որոնք առաջացնում են ճահիճներ: Այսպիսով, ափի երկայնքով ձգվում են ճահճային հողեր:

Բանգլադեշն ունի աշխարհի ամենախոնավ կլիման եւ դրա համար այն երանելի վայր է արեւադարձային մուսոնների համար: 1970 թվականին այս տանջալլուկ երկիրն ստիպված էր դիմակայելու մի ցիկլոնի ուժգնության, որը երկար ժամանակ համարվում էր 20-րդ դարի հզորագույն տարերային աղետը: Այդ տարի զոհվեց հիսուն հազար մարդ:

Պետք է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ Բանգլադեշի բնակչության մեկ ութերորդն ապրում է կղզիների վրա, որոնց թիվը հասնում է հազարի: 1991 թվականի ապրիլին ծովից եկած ալիքը շատ կղզիներ առավ իր գիրկը՝ խլելով հազարավոր մարդկային կյանքեր: Ծովային տարերքը Բանգլադեշի ժողովրդին ոչ միայն զրկեց իրենց տներից եւ սննդից, այլեւ իր հետ բերեց մի շարք վարակիչ հիվանդություններ եւ համաճարակներ:

Գիտնականները ենթադրում են, որ եթե այս տարածաշրջանում կլիմայական պայմանները չփոխվեն, ապա հնարավոր է, որ 21-րդ դարում, կապված կլիմայի ընդհանուր տաքացման հետ, Բանգլադեշի մեծ մասը կարող է անցնել ջրի տակ: Հատկապես լուրջ սպառնալիքի տակ է Գանգեսի հովիտը, որը ծովի մակարդակից ցածր է գտնվում: Երկրի հենց այս շրջանն է առավել խիտ բնակեցված. այստեղ ապրում է ավելի քան 23 միլիոն մարդ:

Կանաչ թեյի գաղտնիքները

Կանաչ թեյ օգտագործելու սովորույթը եկել է Չինաստանից: Ամեն ինչ սկսվել է այն ժամանակ, երբ բուդդայական վանականները, որոնք Չինաստան էին գնացել նոր գիտելիքների հետեւից, վերադարձան Ճապոնիա ու իրենց հետ բերեցին թեյը՝ որպես դեղամիջոց: Կամակուրայի ժամանակաշրջանում (1191-1333) վանական Եյսայը թեյի օգտակար հատկությունների մասին գրեց իր «Թեյ՝ առողջությունը սպասարկելու զարմանալի միջոց» գրքում:

Թեյը զարմանալի հնարավորություն ունի. երկարացնում է կյանքը: Այնտեղ, ուր մարդը թեյ է աճեցնում, երկար կյանքն ուղեկցում է նրան: Մասնագետները պնդում են, որ հատկապես կանաչ թեյը, որպես հզոր դեղամիջոց, հին ժամանակներից էլ գնահատվել է: Վերջին գիտական հետազոտությունները հաստատում են այդ պնդումը:

Կանաչ թեյ. հատկությունները

Վիճակագրության ճապոնական տվյալները փաստում են, որ քաղցկեղից մահացության ցուցանիշները վերջին տարիներին նվազել են: Այդ փաստը հետաքրքրեց գիտնականներին, եւ նրանք փորձեցին որոշել այս հիվանդության տարածման աշխարհագրությունը եւ յուրաքանչյուր բնակավայրին բնորոշ քաղցկեղի տեսակը: Փորձարկման համար ընտրվեց Սիդզուոկի պրեֆեկտուրան: Արդյունքում պարզվեց, որ այն շրջանները, որտեղ զբաղվում են կանաչ թեյի արտադրությամբ, բոլոր տեսակի քաղցկեղներից մահացության ամենացածր ցուցանիշներն ունեն: Այնտեղ, որտեղ կանաչ թեյը հիմնական բերքն է, մարդիկ սովորություն ունեն խմել այն բավական թունդ տեսքով: Այստեղից եզրակացություն արվեց, որ կանաչ թեյը կարող է որոշ կապ ունենալ քաղցկեղի կանխարգելման հետ: Մնում էր միայն մի շարք փորձարկումներ անցկացնել՝ առաջ քաշված տեսությունն ապացուցելու համար:

Բացի այն հատկություններից, որոնք վկայում էին քաղցկեղի դեմ կանաչ թեյի բարերար ազդեցության մասին, պարզվեց, որ թեյն այլ հրաշագործ հատկություններ եւս ունի: Մոտ 60 տարի առաջ Կիոտո համալսարանի դոկտոր Մինոյադան նկատել է, որ շաքարախտով հիվանդների մեզի մեջ հայտանաբերված շաքարը նկատելիորեն նվազել է թեյախմության արարողությանը մասնակցելուց հետո:

Նա մի թեզ առաջ քաշեց, ըստ որի թեյախմության ավանդական արարողության ժամանակ օգտագործվող թեյը արյան մեջ շաքարի մակարդակն իջեցնելու հատկություն ունի: Թեյի արարողությունը (տյա-նո-յու) գեղագիտական ծես է Ճապոնական մշակույթում, որը որոշում է կանաչ թեյի՝ մատ-տյայի մանրացված փոշու թեյախմության արարողակարգն ու գործընթացը: Ընդունված է մտածել, որ մատ-տյան՝ գյեկուրո թեյի մի քանի տեսակների խառնուրդ է: Գյեկուրոն կանաչ թեյի լավագույն տեսակն է: Սակայն դա ճշմարիտ է միայն մասամբ: Մատ-տյան աճեցնում են նույն կերպ, ինչ գյեկուրոն, բայց մշակում են այլ կերպ: Թեյի տերեւները ամբողջական են չորացվում, այնուհետեւ հեռացվում են մանր ճյուղերը: Այդ անցողիկ էտապում թեյը կոչվում է տենչա: Հենց տենչան էլ աղում են՝ թեյի փոշի ստանալու համար, որն էլ կոչվում է մատ-տյա: Դա արվում է թեյի արարողությունից քիչ առաջ: Պատրաստելու ժամանակ մատ-տյան չեն եփում, այլ խփում են մինչեւ փրփրելը:

Դժբախտաբար, այս կարեւոր բացահայտումն արհամարհվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ դրան հաջորդած սննդամթերքի պակասության պատճառով: Սակայն վերջերս Ճապոնիայում կրկին մեծացել է հետաքրքրությունը շաքարախտի եւ կանաչ թեյի՝ արյան մեջ շաքարի մակարդակն իջեցնելու հնարավորությունների հանդեպ:

Գոյություն ունի սակայն եւս մեկ ոչ պակաս կարեւոր հանգամանք, որը պետք է իմանան բոլոր նրանք, ովքեր կանաչ թեյ են օգտագործում: Թեյի այս տեսակը, իր մեջ պարունակող կոֆեինի պատճառով, որոշ մարդկանց մոտ կարող է ալերգիա առաջացնել: Նրանք, ովքեր սրտի հետ խնդիրներ ունեն, չպետք է օրվա մեջ երկու բաժակից ավելի թեյ օգտագործեն: Հղի կանայք ու կերակրող մայրերը չպետք է օգտագործեն մեծ քանակությամբ:

Կանաչ թեյի տեսակները

Եթե պատրաստվում եք կանաչ թեյի երկրպագու դառնալ, պետք է իմանաք դրա հիմնական տեսակները.

- Նետտո սենչան բաց դեղնականաչավուն գույն ունի եւ օգատակար է սնունդ ընդունելու ժամանակ:
- Գյեկորուն պակաս բուրումնավետ է, քան Սենչան եւ ավելի հաճելի համ ունի:
- Օրգանական Ֆուկամուշին չան խոտային, քիչ քաղցր համ ունի:
- Մաթչան թարմացնող հատկություն ունի:
- Հոջի չան մուգ դեղին գույն ունի, կարելի է խմել եւ տաք, եւ սառը: Կոֆեին քիչ է պարունակում:
- Ձենմայ չան սենչայի, չմաքրված բրնձի եւ մատչայի համադրություն է: Արդյունքում թեյը գարու հարուստ համ եւ հարուստ կանաչ գույն ունի: Ձենմայ չան շատ քիչ կոֆեին է պարունակում:

Ինչպես ձեռք բերել օգտակար սովորություն

Վատ սովորությունները զարմանալիորեն արագ են ամրապնդվում. բավական է մի քանի ծխախոտ ծխել, եւ դրանից կախվածությունն արդեն առկա է: Իսկ ահա օգտակար սովորություններ ձեռք բերելու համար պետք է լուրջ ջանքեր գործադրել, միջինը՝ 66 օր: Այս թիվը որոշել են գիտնականները:

Սովորությունն այն է, ինչ մենք անում ենք մեքենայորեն՝ առանց առանձնահատուկ լարվածության ու ջանքերի: Եթե մենք կարդայինք, խոսեինք, ատամներ մաքրեինք ու շփվեինք անընդհատ նախապես վերլուծելով ու պլանավորելով մեր արարքները, ապա շուտով կխելագարվեինք. ամենօրյա իրադարձությունները չափազանց շատ ջանք ու էներգիա կխլեին:

Ավտոմատ գործողություններ մենք անում ենք ամեն օր՝ ամբողջ օրվա ընթացքում: Փորձեք մի օր չկապել ժամացույցը եւ հաշվեք, թե քանի անգամ եք նայում ձախ ձեռքին:

Ծխելը, թմրամիջոցները եւ նման այլ վնասակար սովորություններն արագ են ձեռք բերվում, քանի որ հզոր հենք ունեն՝ դրանք անմիջականորեն կապված են հաճույքի հետ: Իսկ վազքի կամ զբոսանքի պարգեւած հաճույքը միանգամից չի ձեւավորվում:

Լոնդոնի համալսարանի Առողջ ապրելակերպի կենտրոնի դոկտոր Ուորդլն ու իր գործընկերները պարզել են. որեւէ գործողություն մեքենայաբար կատարելու համար միջինը անհրաժեշտ է 66 օր:

96 կամավորների առաջարկել են 12 շաբաթ շարունակ մի որեւէ օգատակար բան անել. 15 որպե մարզվել, վիտամինային ըմպելիք խմել

կամ ընթրիքին միրգ ուտել: Սովորությունը համարվում էր ձեռք բերված, եթե այն լրացուցիչ ջանքեր կամ ներքին ընդվզում չէր առաջացնում:

«Սոցիալական հոգեբանության եվրոպական ամսագրում» տպագրած հոդվածում հեղինակները պնդում են, որ ամենաշատ ժամանակը պահանջվել է մարզվելը սովորություն դարձնելու համար, մրգերին կամ վիտամիններին սովորելը պակաս ջանքեր է պահանջել: Փորձի մասնակիցները որեւէ գործողություն մեքենայաբար սկսել են կատարել միջինը 66 օր անց: Թեեւ այս ֆենոմենի բացատրությունը դեռ չեն գտել, այնուամենայնիվ փաստ է, որ մարդը գիտակցաբար կարող է փոխել իր վնասակար սովորությունները՝ փոխարինելով դրանք օգտակարներով:

Գնացքն ավելի վտանգավոր է

«Նյու սայնթիսթ» ամսագիրը գրում է, որ, վերջին ուսումնասիրությունների համաձայն, գնացքն ավելի շատ է աղտոտում շրջակա միջավայրը, քան մինչ այդ կարծում էին: Ըստ ստացված տվյալների, Բոստոնի մերձակայքով գնացքի երթեւեկն ավելի շատ վնաս է հասցնում շրջակա միջավայրին, քան եթե նույն տարածքի վրայով ռեակտիվ ինքնաթիռ անցնի:

Բերքլիում Կալիֆոռնիայի համալսարանի գիտնականներ Մայքլ Չեսթերը եւ Արփադ Հորվեթն ուսումնասիրել ու համեմատել են Միացյալ Նահանգներում կիրառվող տրանսպորտի 11 տեսակների արտանետումները: Ի տարբերություն նախորդ հետազոտողների՝ նրանք ուսումնասիրել են ոչ միայն ավտոմեքենաների, ավտոբուսների, գնացքների ու օդանավերի արտանետումներն աշխատանքի պահին, այլեւ՝ դրանց աշխատանքի համար անհրաժեշտ վառելիքի ու ենթակառուցվածքների շինարարության ու օգտագործման ժամանակ տեղի ունեցող արտանետումները:

Աղտոտման այս հավելյալ աղբյուրները հաշվի առնելու դեպքում գնացքի երթեւեկի ընթացքում ջերմոցային գազերի արտանետումը մթնոլորտ ավելանում է շուրջ երկու անգամ: Նույն հաշվարկներով ավտոմեքենայի արտանետումներն ավելանում են մոտ մեկ երրորդով: Ընդ որում, ինչպես նշում է հոդվածագիրը, ավտոմեքենաների համար մեծ ենթակառուցվածքներ չեն պահանջվում, ինչպես երկաթգծերով շարժվող գնացքի դեպքում:

արտակարգ ժամանց

Անհեթեթ դատավարությունների պատմությունից

Բարոյական վնաս

Միացյալ նահանգներում մի կին իր ավտոմեքենայով վրաերթի է ենթարկում անակնկալ կերպով փողոցի մեջտեղում հայտնված հետիոտնին: Կինը չի հասցնում արգելակել, եւ անցորդը հարվածի հետեւանքով մի քանի մետր հեռու է թռչում: Ստացած վնասվածքներից տղամարդը տեղում մահանում է:

Պատահարից մի քանի օր անց կինը հայց է ներկայացնում դատարան, որով զոհվածի այրուց պահանջում է փոխհատուցել իր կրած բարոյական վնասը: Նա հայտարարում է, որ իր հոգեկան հավասարակշռությանն անուղղելի հարված է հասցվել, երբ ինքը նայում էր, թե ինչպես է մեռնում իր իսկ կողմից վրաերթի ենթարկված տղամարդը: Այժմ նրա կինը պետք է վճարի իրեն պատճառված տանջանքների համար:

Երբ սուրճը խփում է գլխին

Մի կին որոշում է խանութից սրճեփ գնել: Խանութի դարակին իրար վրա սրճեփի միանման չորս արկղ էր դրված: Կինը, չգիտես ինչու, առանց երկար-բարակ մտածելու քաշում է ամենատակի արկղը եւ... Բնականաբար, դրա վրա դրված մնացած արկղերը թափվում են նրա գլխին: Կինը թեթեւ վնասվածք եւ ուղեղի ցնցում է ստանում:

Նա դիմում է դատարան եւ

գործ հարուցում խանութի տնօրինության դեմ: Կնոջ խոսքերով՝ խանութի տնօրինությունը պարտավոր էր իր հաճախորդներին զգուշացնել, որ տակի արկղը քաշելու դեպքում վերեւինները կարող են ընկել ու իրեն մարմնական վնասվածք պատճառել:

Տարիքային խտրականություն

Կանադայի Բելվիլ քաղաքում բնակվող Ջոյս Ուորսլին եւ նրա մայրը՝ Ադա Գրեյը, դատական գործ են հարուցում քաղաքի գիշերային բարերից մեկի տնօրենի դեմ: Կանանց կարծիքով՝ աշխատանքի ընդունելիս իրենց նկատմամբ խտրականություն էր կիրառվել:

Բանն այն է, որ մայր ու աղջիկ աշխատանքի ընդունվելու համար եկել էին վերը նշված գիշերային բարը, որը թերթում հետեւյալ բովանդակությամբ հայտարարություն էր տվել. «Պահանջվում են մատուցողուհիներ, որոնք պատրաստ են հաճախորդներին սպասարկել միայն անդրավարտիքով»: Երկու կանանց մերժել էին՝ պատճառ բերելով նրանց տարիքի անհամապատասխանությունը:

Հավելենք, որ Ադա Գրեյն 86 տարեկան էր, իսկ նրա դուստրը՝ 67:

Երդվիր, որ հիմար ես

Մեդիսոնից Մերի Ուբաուդի անունով մի կին ավտոմեքենայով վթարի է ենթարկվում: Պատահարի մեղավորին տուժած կինը շատ արագ գտնում է՝ «Մազդա Մոթորս» ընկերությունը: Մերին հայտնի ավտոարտադրող ընկերությունից 150 հազար դոլար է պահանջում, քանի որ իրենց ավտոմեքենաներում չկա անվտանգության գոտիներից օգտվելու կանոնների մասին հրահանգ:

«Մազդա» ընկերությանը միայն մի ելք էր մնում: Ստիպել կնոջը, որպեսզի նա դատարանում երդվի, որ ինքը նախկինում երբեւէ անվտանգության գոտի չի օգտագործել, երբեւէ օդանավով չի թռչել եւ չափազանց հիմար է, որպեսզի իմանար, թե ինչպես են օգտվում անվտանգության գոտիներից:

Առատաձեռն ժլատը

1996 թ. կանադացի գործարար Դագ Սթիդին ճանապարհին արագությունը գերազանցելու համար տուգանում են 117 դոլարով: Այս գումարը նրա համար բոլորովին էլ մեծ չէր, սակայն Դագը չի համաձայնում ոստիկանի հետ ու դիմում է դատարան:

Մի քանի դատական քաշքշուկի ընթացքում ժլատ գործարարը փաստաբանների ու դատական ծախսերի վրա ավելի քան 120 հազար դոլար է վատնում: Անտեսելով կնոջ խնդրանքները՝ Սթիդը լի էր իր նպատակին հասնելու վճռականությամբ եւ որոշել էր գնալ մինչեւ վերջ ու հասնել «արդարության»: Նրա կարծիքով՝ միայն իր համար օրենքում պետք է համապատասխան փոփոխություն կատարվեր, որը թույլ կտար վարորդներին մայրուղու վրա ավելի ազատ զգալ իրենց:

Թանկարժեք օրորոցային

Օրերից մի օր Բուխարեստի բնակիչ, թոշակառու Ժորժի Վիցիանուն որոշում է օգտվել հեռախոսային սեքս ծառայությունից: Սակայն ռումինացի պապիկի համար հեռախոսային գեղեցկուհիների զրույցներն այնքան ձանձրալի ու հոգնեցուցիչ են լինում, որ ծերուկը պարզապես... քնում է: Խորամանկ աղջիկները, օգտվելով առիթից, հերթով փոխարինում են իրար ու շարունակում իրենց «հետաքրքիր» զրույցն այնքան, ինչքան հնարավոր է:

Արդյունքում՝ ծերուկ Վիցիանուն հեռախոսի վարձավճարի կտրոնը տեսնելիս քիչ է մնում կաթվածահար լինի: Այդ կտրոնի համաձայն՝ նրա հեռախոսի վարձը մոտ 1500 դոլար էր կազմել: Համեմատության համար նշենք, որ ռումինական լեյով հաշվելու դեպքում այդ գումարը կազմում էր նրա տարեկան թոշակը: Պապիկը դիմում է դատարան, սակայն դատավորը ստիպում է նրան վճարել աղջիկների «ծառայության» դիմաց: Սակայն հանուն արդարության պետք է նշել, որ նույն գումարի չափով տուգանվում է նաեւ այդօրինակ ծառայություններ առաջարկող ընկերությունը, բայց այս անգամ արդեն՝ անորակ սպասարկման համար:

Քաղաք Արեւմտ Հայաստան / Կորոլյոկ	⇨	Ոչ հատուկ / Կրոնական խրատ	⇨	Ազգություն ՌԴ / Սիրեկան	⇨	Լեհական պարոն / Ոտնամանի տեսակ	⇨	Հայազգի ճարտարապետ	⇨	Քաղաք ՀՀ / Հայկական ժող. երգ	⇨
⇩		⇩		⇩		⇩				⇩	
Դպրոցական սենյակ / Հորդանալ	⇨							Նույնպես / Հայ գրող՝ Վիլյամ ...	⇨		
⇩							Եմենի մ/քաղաքը / Զինված ուժեր	⇨ ⇩			
Փոս / Կտորեղենի վաճառական	⇨			Մ/քաղաքը Բեյրութ / Նարդու խորանարդիկ	⇨		⇩				
⇩				⇩	Դերձակի գործը / Գավազան	⇨			Արգոնավորդների առաջնորդը		Մարդ կա ելել է ...ն աշխարհի
Օվկիանոս		Ներկա եմ / Ընտանի նապաստակ	⇨		⇩	Հաբեթի հայրը / Նավթամթերք	⇨		⇩	Տեգերակին՝ արեւմտահայերեն	⇩
⇩	Անկուշտ, ընչասեր	⇩	Հնդկական էպոս / Գետի ուղին	⇨		⇩				⇩	
⇨			⇩	Ժխտել / Առաջին տիեզերագնացը	⇨						
	Անկանոն զորք / Քարերով զարդարած	⇨		⇩			Իբսենի պիեսներից / Ոգելից խմիչք	⇨			
⇨							⇩	Հանելուկ նկարներով		Տանի-քանյութ	
	Մակագրություն կինոնկարում		Տապակ		Ուռկան / Չեբուրաշկային ընկերը	⇨		⇩	Ուղտայծ	⇩	Հոգեւորական դասի ներկայացուցիչ
Ծխախոտի ծողիկ	⇩	Միապետի գլխանոց	⇩ ⇨		⇩	Տիրակալ՝ Առաջավոր Ասիայում	⇨		⇩		⇩
⇨							Մոնղոլ խան	⇨			
Դրա մեջ է դրվում նկարը		Լարային նվագարան	⇨			Հնագույն երկիր Հրվ. Միջագետքում	⇨				
⇨							Սերմ, ծիլ	⇨			

§²ñï³Ï³ñ· Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ô Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦
Éñ³ï í³Ï³Ý Ï»ÝïñáÝ êäÀ

îÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý
öáËïÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
²ñ³ØáíëÇëÙ³Ý
Ò»ô³íáñáÕª
ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

Â»ñÃÁ ïå³·ñíáûÙ ¿ º²ÐÎ³ç³ÏóáûÃÙ³Ùµ
OSCE
º íñáå³ÙáûÙ³Ýíï³Ý·áûÃÙ³Ý
»ô Ñ³Ù³·áñí³ÏóáûÃÙ³Ý
Ï³½Ù³Ï»ñåáûÃÙ³Ý »ñ»ô³ÝÙ³Ý·ñ³ë»ÝÙ³Ï

îå³·ñí³í¿ §îÇ·ñ³Ý Ø»í¦ Ññ³ï³ñ³Ý ÏãáûÃÙ³Ý
ïå³ñ³ÝáûÙ` ²ñß³ÏáûÝÙ³ó 2
ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáûÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ÙÏ³Ý` 1074,
ïå³Ù³Ý³ÏÁ` 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
23.7.2009 թ.